26 նոյեմբերի 2009 թվականի N 1339 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 1172-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 15-ի «2009 թվականի նոյեմբերի 22-ին կայանալիք՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Աչաջրի գյուղական համայնքում համայնքի ղեկավարի, Բերդի քաղաքային, Այգեհովտի, Ենոքավանի, Բերդավանի, Ջուջևանի, Վերին Կարմիր աղբյուրի և Չորթանի գյուղական համայնքներում ավագանիների անդամների հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման ծախսերը ֆինանսավորելու մասին» N 1172-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում «5.322.935» թիվը փոխարինել «6.235.685» թվով.

2) որոշման 2-րդ կետում «նախահաշիվներին համապատասխան՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների» բառերը փոխարինել «նախահաշիվներին համապատասխան՝ համաձայն NN 1, 2 և 4 հավելվածների».

3) որոշման N 1 հավելվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հավելված N 1
ՀՀ կառավարության 2009 թվականի
հոկտեմբերի 15-ի N 1172-Ն որոշման

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ

09_1339

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ N 41 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԾԱԽՍԵՐԻ՝ ԿԱՊՎԱԾ ԲԵՐԴԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ, ՎԵՐԻՆ ԿԱՐՄԻՐ ԱՂԲՅՈՒՐԻ, ՉՈՐԹԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԱՎԱԳԱՆԻՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԵՏ

NN ը/կ	Ծախսերը	Գումարը (դրամ)
1.	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	120000
	այդ թվում՝	
1)	հանձնաժողովի նախագահի	60000
2)	հանձնաժողովի նախագահի տեղակալի	30000
3)	հանձնաժողովի քարտուղարի	30000
2.	Փաստացի սոցիալական ապահովության վճարներ	30000
	Ընդամենը	15000».

4) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ N 4 հավելվածով.

«Հավելված N 4
ՀՀ կառավարության 2009 թվականի
հոկտեմբերի 15-ի N 1172-Ն որոշման

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ N 40 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԾԱԽՍԵՐԻ՝ ԿԱՊՎԱԾ ԱՋԱՋՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ, ԱՅԳԵՀՈՎՏԻ, ԵՆՈՔԱՎԱՆԻ, ԲԵՐԴԱՎԱՆԻ, ՋՈՒՋԵՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԱՎԱԳԱՆԻՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԵՏ

NN ը/կ	Ծախսերը	Գումարը (դրամ)
1.	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	905000

այդ թվում՝

1)	հանձնաժողովի նախագահի (2 ամիս x 150000 դրամ)	300000
2)	նախագահի տեղակալի (2 ամիս x 110000 դրամ)	220000
3)	հանձնաժողովի քարտուղարի (2 ամիս x 110000 դրամ)	220000
4)	հանձնաժողովի անդամների (1 ամիս x 3 անդամ x 55000 դրամ)	165000
2.	Փաստացի սոցիալական ապահովության վճարներ	157750
	Ընդամենը	1062750»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2009 թ. նոյեմբերի
Երևան